ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 136 -Ա «14» 04 2021թ. ք.Երևան

ԱՐԵՎԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-26.1-Ղ4-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի № 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի № 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արևիկ Հովհաննեսի Առաքելյանին 2021 թվականի ապրիլի 15-ից նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի պետի (ծածկագիր՝ 22-3-26.1-Ղ4-2) քաղաքացիական ծառայության պաշտոնում՝ տասներկու ամիս փորձաշրջանով:
2. Ամսական աշխատավարձը 256 623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:
3. Արևիկ Առաքելյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի պետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 22-3-26.1-Ղ4-1) Հենրիկ Սահակյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԵԼԱՆՅԱ ՂՈՒՇՉՅԱՆ